

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԲՏԱՆ-ԳՀԾՁԲ-2020/01**

ք. Երևան

« 11 » փետրվարի 2020թ.

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Շ. Մեժլումյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա «Պատվիրատու», մի կողմից, և «Գարանտերվիս» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Նիկողոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կատարող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 1,200,000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ԼԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ԼԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Նշան պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (լսնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 29 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
 Բ. Երևան Վ.Սարգսյան 3/3
 ՀՀ \$1.000.000.000,00 գործառնական



ԿԱՏԱՐՈՂ

«Գարանտսերվիս» ՍՊԸ
 Բ. Երևան, Թբիլիսյան խճ 20
 «Կոնվերսանկ» ՓԲԸ
 Հ/Հ 193004674290
 ՀՎՀՀ 00840437
 Տնօրեն
 Մ. Կողոյսյան
 /ստորագրություն/
 Վ.Տ



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափարածնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	5011130/2	Տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայություններ /Կիա Օպտիմա (KIA OPTIMA)՝ 2009թ/ Տեխնիկական բնութագիրը կցվում է***	դրամ	250,000	1	Ք. Երևան	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 20.12.2020թ.
2	5011130/3	տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայություններ /Տոյոտա Լենդ Կրուիզեր (TOYOTA LAND CRUISER PRADO 2,7) 2008թ/ Տեխնիկական բնութագիրը կցվում է***	դրամ	350,000	1	Ք. Երևան	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 20.12.2020թ.
3	5011130/4	տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայություններ /Նիսան Տիդա Nissan Tida)՝ 2008թ/ Տեխնիկական բնութագիրը կցվում է***	դրամ	250,000	1	Ք. Երևան	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 20.12.2020թ.
4	5011130/5	տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայություններ /Տոյոտա Ավալոն (TOYOTA Avalon) 2008թ/ Տեխնիկական բնութագիրը կցվում է***	դրամ	350,000	1	Ք. Երևան	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 20.12.2020թ.

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Քարծր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն»
 Բ. Երևան Կ.Սարգսյան 3/3
 «Ցն աշխատանքի գործառնական»



ԿԱՏԱՐՈՂ

«Գարանտերվիս» ՍՊԸ
 Բ. Երևան, Թբիլիսյան խճ 20
 «Կոնվերսանկ» ՓԲԸ
 Հ/Հ 193004674290
 ՀԿՀՀ 00840437
 Տնօրեն
 Մ. Օրկոտյան
 /ստորագրություն/
 Կ.Տ

Տեխնիկական բնութագիր***

N	SU-1, SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Տրանսպորտային միջոցների մակնիշները (տեսակները) ըստ չափաբաժինների ²			
		Չափաբաժին 1	Չափաբաժին 2	Չափաբաժին 3	Չափաբաժին 4
		Կիա Օպտիմա (KIA OPTIMA)՝ 2009թ	Տոյոտա Լենդ Կռուիզեր (TOYOTA LAND CRUISER PRADO 2,7)՝ 2008թ	Նիսան Տիդա (Nissan Tida)՝ 2008թ	Տոյոտա Ավալոն (TOYOTA Avalon)՝ 2008թ
1	2	3	4	5	6
1. SU-1 ներառվող ծառայությունների անվանում					
1	Բռնկման համակարգի ստուգում	2000	2000	3000	2000
2	Կցորդման համակարգի ստուգում	2000	2000	3000	2000
3	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	2000	2000	3000	2000
4	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	2000	2000	3000	2000
5	ABS համակարգի ստուգում	2000	2000	3000	2000
6	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	2000	2000	3000	2000
7	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	2000	2000	3000	2000
2. Շարժիչ					
8	Շարժիչի հանում և տեղադրում	33600	35000	35000	30000
9	Շարժիչի վերանորոգում	120000	125000	125000	125000
10	Շարժիչի քանդում արատավորում և հավաքում	28800	30000	65000	30000
11	Շարժիչի գլխիկի հանում տեղադրում միջադիրի փոխարինումով	38400	40000	40000	40000
12	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով	28800	30000	65000	30000
13	Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հղկումով	5500	6000	12500	6000
14	Վառոցքի մոմի բնիկի նորոգում	1400	1500	3500	1500
15	Շարժիչի փականների զսպանակների փոխարինում	500	500	500	500
16	Փականների խցուկների փոխարինում 1 կ-տ	19200	20000	20000	20000

17	Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում 1 կ-տ	19200	20000	20000	20000
18	Շարժիչի մխոցաօդերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	38000	40000	40000	40000
19	Ծնկաձև լիսեռի հղկում	28800	30000	75000	30000
20	Ծնկաձև լիսեռի փոխարինում	24000	25000	25000	25000
21	Ծնկաձև լիսեռի ներդրակների փոխարինում 1 կ-տ	9600	10000	10000	10000
22	Ծնկաձև լիսեռի ատամնանիվի փոխարինում	7200	7500	7500	7500
23	Ծնկաձև լիսեռի ուղղում	24000	25000	50000	25000
24	Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	7200	7500	7500	7500
25	Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	33600	35000	35000	35000
26	Շարժիչի բլոկի փոխարինում	86400	90000	90000	90000
27	Շարժիչի գլանի փոխարինում 1 հատ	19200	20000	20000	20000
28	Շարժիչի բլոկի հղկում	33600	35000	35000	35000
29	Մխոցի փոխարինում 1 հատ	43200	45000	45000	45000
30	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	120000	125000	125000	125000
31	Բաշխիչ լիսեռի ականոցների հանում և տեղադրում կամ փոխարինում	14400	15000	15000	15000
32	Բաշխիչ լիսեռի խտաբուկի փոխարինում	7200	7500	7500	7500
33	Փոկանիվի փոխարինում	7200	7500	7500	7500
34	Շարժիչի ատամնավոր փոկի փոխարինում	0	0	0	0
35	Շարժիչի շղթայի փոխարինում	28800	30000	30000	30000
36	Յուղի մղիչի շղթայի փոխարինում	9600	10000	10000	10000
37	Շարժիչի վանոսների փոխարինում	38400	40000	40000	40000
38	Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում)	7200	7500	7500	7500
39	Շարժիչի քարտերի փոխարինում, միջադիրի փոխարինումով	7200	7500	7500	7500
40	Շարժիչի քարտերի միջադիրի փոխարինում	7200	7500	7500	7500
41	Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով	7200	7500	7500	7500
42	Շարժիչի յուղի մղիչի փոխարինում	12000	12500	12500	12500
43	Շարժիչի յուղի մղիչի մաքրում	2400	2500	2500	2500
44	Շարժիչի յուղի մղիչի կարգավորում	2400	2500	2500	2500
45	Յուղի մղիչի թաթևի փոխարինում	2400	2500	2500	2500
46	Յուղի ծորակի փոխարինում	4800	5000	5000	5000
47	Օդաքաշակ փողրակի փոխարինում	2400	2500	2500	2500
48	Շարժիչի վանելիքի բարձր ճնշման մղիչի փոխարինում	14400	15000	15000	15000
49	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում կամ փոխարինում	9600	10000	10000	10000
50	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	57600	60000	60000	60000
51	Ուղղորդիչ վանոսների փոխարինում	2400	2500	2500	2500
52	Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	16800	17500	17500	17500
53	Շարժիչի կափույրի փոխարինում	9600	10000	10000	10000
54	Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում	9600	10000	10000	10000
55	Մխոցամատի փոխարինում	2400	2500	2500	2500
56	Շարժիչի շարժաթևի փոխարինում	12000	12500	12500	12500
57	Մխոցային օղակների փոխարինում 1 կ-տ	38400	40000	40000	40000
58	Շարժիչի բաշխիչ լիսեռի երիթակի փոխարինում	240	250000	250000	250000

59	Ատամնանիվի փոխարինում	4800	5000	5000	5000
60	Ատամնավոր փոկի պատյանի փոխարինում	7200	7500	7500	7500
61	Սովսարիկ փոխարինում	4800	5000	5000	5000
62	Շարժիչի կայունի փոխարինում	4800	5000	5000	5000
63	Շարժիչի հանդարտիչի փոխարինում	12000	12500	12500	12500
64	Շարժիչի փոկի հոլովակի փոխարինում	9600	10000	10000	10000
65	Շարժիչի հոլովակի առանցքակալի փոխարինում	7200	7500	7500	7500
66	Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով	24000	25000	25000	17500
67	Շարժիչի յուղի արանքաչափիչի (Քցտ) իրանի փոխարինում	9600	10000	10000	10000
68	Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում	12000	12500	12500	12500
69	Շարժիչի գամասեղի փոխարինում	1680	1750	1750	1750
70	Շարժիչի գամասեղի փոխարինում րնիկի նորոգումով	9120	9500	9500	9500
71	Գլխիկի հեղույսի փոխարինում	3840	4000	4000	4000
72	Ծեկածև լիսեղի հեղույսի փոխարինում	3840	4000	4000	4000
73	Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում	19200	20000	20000	15000
74	Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում	19200	20000	20000	15000
	3. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ				
75	Յուղի և յուղի գտիչի փոխարինում	480	500	500	500
76	Ավտոմեքենայի յուղում	960	1000	1000	1000
77	Համակարգչային ակտորոշում, թերությունների վերացմամբ	4320	4500	7500	4500
78	Յուղի ռադիատորի փոխարինում	9600	10000	10000	10000
79	Յուղի ռադիատորի նորոգում	9600	10000	21000	10000
80	Յուղի գտիչի փականի փոխարինում	2400	2500	2500	2500
81	Արտածման կալեկտորի հանում և տեղադրում կամ փոխարինում	19200	20000	20000	20000
82	Ներածման կալեկտորի հանում և տեղադրում կամ փոխարինում	19200	20000	20000	20000
83	Արտածման կալեկտորի միջադիրի փոխարինում	19200	20000	20000	20000
84	Ներածման կալեկտորի միջադիրի փոխարինում	19200	20000	20000	20000
85	Վառելիքի փողոկակի փոխարինում	3800	4000	4000	4000
86	Վառոցքի մոմի փոխարինում	2400	2500	2500	2500
87	Վառելիքի նուրբ մաքրման գտիչի փոխարինում	7200	7500	7500	7500
88	Օդի գտիչի փոխարինում	1440	1500	1500	1500
89	Կոնդիցիոնների գտիչի փոխարինում	1440	1500	1500	1500
90	Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	4800	5000	5000	5000
91	Օդի ծախսաչափիչի փողոկակի հանում և տեղադրում	2400	2500	2500	2500
92	Օդի գտիչի փողոկակի հանում և տեղադրում	2400	2500	2500	2500
93	Օդաբաշի փողոկակի հանում և տեղադրում	2400	2500	2500	2500
94	Ավտոմատ փոխանցման տուփի ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	33600	35000	35000	35000
95	Ինժեկտորի բոցամուղի փոխարինում	4800	5000	5000	5000
96	Ինժեկտորի բոցամուղեղի մաքրում	7200	7500	7500	7500
97	Բոցամուղի կողավորում	9600	10000	21000	10000

98	Ինժեկտորի բոցամուղի խտաբուկերի փոխարինում	5760	6000	6000	6000
99	Բենզամոդիչի փոխարինում	7200	7500	7500	7500
100	Վառելիքի կոշտ մաքրման գոխիչի փոխարինում	2880	3000	3000	3000
101	Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	2400	2500	2500	2500
102	Բռնկման կառգավորում	2400	2500	7500	2500
103	CO կարգավորում	2400	2500	2500	2500
104	Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	9600	10000	10000	10000
105	Ղեկավարման բլոկի վերանորոգում	19200	20000	20000	20000
106	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	7200	7500	7500	7500
107	Վառելիքի բաքի մաքրում	4320	4500	4500	4500
108	Արագարարի ոտնակի փոխարինում	2400	2500	2500	2500
109	Արագարարի ոտնակի տվիչի փոխարինում	2400	2500	2500	2500
110	Օդի ծախսի տվիչի փոխարինում	4800	5000	5000	5000
111	Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում	7200	7500	7500	7500
112	Ջրի խողովակի, փողրակի փոխարինում	2400	2500	2500	2500
113	Բենզոբաքի բենզոմոդիչի ցանցի փոխարինում	2400	2500	2500	2500
114	Բենզոբաքի բենզոմոդիչի ցանցի մաքրում	2400	2500	5000	2500
115	Յուղի ճնշման տվիչի փոխարինում	5760	6000	6000	6000
116	Տվիչի փոխարինում	2400	2500	2500	2500
	4. Սառեցման և արտաձման համակարգ				
117	Հովհարի փոխարինում	9600	10000	10000	10000
118	Հովհարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	5760	6000	6000	6000
119	Ուղիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	9600	10000	10000	10000
120	Ուղիատորի շրջանակի փոխարինում	7200	7500	7500	7500
121	Շերտափեղկի փոխարինում	7200	7500	7500	7500
122	Շերտափեղկի կառավարման ձգածողի փոխարինում	7200	7500	7500	7500
123	Ուղիատորի կալունակի փոխարինում	2400	2500	2500	2500
124	Ուղիատորի փողրակի փոխարինում	2400	2500	2500	2500
125	Կոնդիցիոների կոմպրեսորի հանում և տեղադրում կամ փոխարինում	12000	12500	12500	12500
126	Կոնդիցիոների կալունակի հանում և տեղադրում կամ փոխարինում	2400	2500	2500	2500
127	Կոնդիցիոների առանցքակալի փոխարինում	4800	5000	5000	5000
128	Կոնդիցիոների ռադիատորի փոխարինում	9600	10000	10000	10000
129	Կոնդիցիոների ռադիատորի նորոգում	21600	22500	50000	22500
130	Կոնդիցիոների կոմպրեսորի նորոգում	9600	10000	22500	10000
131	Ունդարձակող բաքի փոխարինում	4800	5000	5000	5000
132	Ունդարձակող բաքի փողրակի փոխարինում	2400	2500	2500	2500
133	Ջրի ծորակի փոխարինում	1440	1500	1500	1500
134	Հովացման հիդրոկցորդի փոխարինում	4800	5000	5000	5000
135	Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում	1440	1500	1500	1500
136	Հովհարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	7200	7500	7500	7500
137	Հովհարի թևանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	4800	5000	5000	5000

138	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված	31200	32500	32500	32500
139	Վառարանի ռադիատորի նորոգում	4800	5000	5000	5000
140	Վառարանի շարժիչի փոխարինում	9600	10000	10000	10000
141	Թերմոստատի փոխարինում	8160	8500	8500	8500
142	Ջրի մոլիբդենի փոխարինում միջադիրով	9600	10000	10000	10000
143	Գեներատորի փոկի փոխարինում	6720	7000	7000	7000
144	Գեներատորի փոկի ձգող հոլովակի փոխարինում	5760	6000	6000	6000
145	Ջրի ռադիատորի վերանորոգում	26400	27500	27500	27500
146	Սառեցման համակարգի օդահանում	2400	2500	6000	2500
147	Խլարարի գոֆոայի փոխարինում	7200	7500	7500	7500
148	Կատալիզատորի հանում	12000	12500	12500	12500
149	Խլարարի կատալիզատորի տվիչի փոխարինում	4800	5000	5000	5000
150	Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	4800	5000	5000	5000
151	Խլարարի 1 հատ խողովակի փոխարինում	4800	5000	5000	5000
152	Խլարարի անտրի (xamyr) փոխարինում	960	1000	1000	1000
153	Խլարարի ներդիրի փոխարինում	4800	5000	5000	5000
154	Խլարարի կախոցի փոխարինում	4800	5000	5000	5000
155	Կալունակի փոխարինում	24000	25000	25000	25000
156	Ուեգենատորի փոխարինում	12000	12500	12500	12500
157	Հովացման հեղուկի փոխարինում	1440	1500	1500	1500
	5. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ				
158	Աշխատանքային կամ գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	19200	20000	20000	0
159	Աշխատանքային կամ գլխ. գլանի հիմնական նորոգում ներառյալ աշխատանքները	14400	15000	15000	0
160	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	28800	30000	30000	0
161	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում կամ փոխարինում	4800	5000	5000	0
162	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	4800	5000	5000	0
163	Կցորդման փողրակի հանում և տեղադրում կամ փոխարինում	2400	2500	2500	0
164	Կցորդման երկժանիի փոխարինում	2400	2500	2500	0
165	ՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	144000	150000	150000	0
166	ՓՏ-ի հավաքածույի փոխարինում	19200	20000	20000	0
167	ՓՏ-ի առցանցի խտաբուկի փոխարինում	9600	10000	10000	0
168	ՓՏ-ի հետնի խտաբուկի փոխարինում	19200	20000	20000	0
169	ՓՏ-ի համաժամիչի փոխարինում	15840	16500	16500	0
170	ՓՏ-ի և ԱՓՏ-ի հանում և տեղադրում	28800	30000	30000	30000
171	ՓՏ-ի քանդում, արատավորում, հավաքում	14400	15000	15000	0
172	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում կամ փոխարինում	14400	15000	15000	0
173	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	14400	15000	15000	0
174	ՓՏ-ի միջանկյալ լիսեռի փոխարինում	14400	15000	15000	0
175	ՓՏ-ի ատամնանիվի փոխարինում	14400	15000	15000	0
176	ՓՏ-ի առաջնային լիսեռի փոխարինում	19200	20000	20000	0
177	ՓՏ-ի երկրորդային լիսեռի փոխարինում	19200	20000	20000	0
178	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի փոխարինում	24000	25000	25000	0
179	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի վերանորոգում	12000	12500	12500	0
180	ՓՏ-ի բաղձիկի փոխարինում	7200	7500	7500	0

181	ՓՏ-ի փոխանցման լծակի փոխարինում	7200	7500	7500	0
182	ՓՏ-ի յուղի փոխարինում	1440	1500	1500	0
183	Վազբաջափի շարժաբերի փոխարինում	4800	5000	5000	5000
184	ԱՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	250000	250000	250000	250000
185	ԱՓՏ-ի հավաքածուի փոխարինում	0	0	0	0
186	ԱՓՏ-ի ատամնանիվի փոխարինում	19200	20000	20000	20000
187	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում կամ փոխարինում	19200	20000	20000	20000
188	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	19200	20000	20000	20000
189	ԱՓՏ-ի կցորդման գլխավոր գլանի կայունակի փոխարինում	19200	20000	20000	20000
190	ԱՓՏ-ի սոլենոիդների փոխարինում	19200	20000	20000	20000
191	ԱՓՏ-ի համակարգչի և սոլենոիդների փոխարինում	57600	60000	60000	60000
192	ԱՓՏ-ի յուղի մղիչի փոխարինում	24000	25000	25000	25000
193	ԱՓՏ-ի յուղի մղիչի խտաբուկերի փոխարինում	7200	7500	7500	7500
194	ԱՓՏ-ի ռադիատորի նորոգում	4800	5000	5000	5000
195	ԱՓՏ-ի ռադիատորի փոխարինում	12000	12500	12500	12500
196	ԱՓՏ-ի հիդրոագույցի փոխարինում	14400	15000	15000	15000
197	ԱՓՏ-ի յուղի գտիչի փոխարինում	9600	10000	10000	10000
198	ԱՓՏ-ի յուղի փոխարինում	4800	5000	5000	5000
199	ԱՓՏ-ի գտիչի լվացում, մաքրում քարտերի հանում և տեղադրումով	4800	5000	5000	5000
	6. Կախոց				
201	Տրավերսի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0	0	0
202	Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում կամ փոխարինում	28800	30000	30000	30000
203	Առջևի անվակունդի առանցքակալի փոխարինում	14400	15000	15000	15000
204	Առջևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	9600	10000	10000	10000
205	Հետևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	9600	10000	10000	10000
206	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	9600	10000	10000	10000
207	Անվակունդի գամասեղի և հեղուսի փոխարինում(մեկ անիվի համար)	9600	10000	10000	10000
208	Ձախ կամ աջ հողակապի խտաբուկերի փոխարինում	2400	2500	2500	2500
209	Տնցամեղմիչի թասակի փոխարինում	9600	10000	10000	10000
210	Առջևի գապանակի փոխարինում	5760	6000	6000	6000
211	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	2880	3000	3000	3000
212	Ներքևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	6720	7000	7000	7000
213	Ներքևի լծակի վռանների փոխարինում 1 հատ	7200	7500	7500	7500
214	Ներքևի լծակի հեղուսի փոխարինում	4800	5000	5000	5000
215	Անիվների պաշտպանիչի փոխարինում	960	1000	1000	1000
216	Շարժիչի պաշտպանիչի փոխարինում	480	500	500	500
217	Վերևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	480	500	500	500
218	Վերևի լծակի վռանների փոխարինում 1 հատ	7200	7500	7500	7500
219	Վերևի լծակի հեղուսի փոխարինում	4800	5000	5000	5000
220	Գնդն հողակապի պատյանի փոխարինում	960	1000	1000	1000

221	Գնդե հողակապի փոխարինում	1920	2000	2000	2000
222	Գնդե հողակապի նորոգում	7200	7500	7500	7500
223	Առջևի կայունարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	7200	7500	7500	7500
224	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	2400	2500	2500	2500
225	Առջևի կայունարարի կալունակի փոխարինում	4800	5000	5000	5000
226	Առջևի կայունարարի կանգնակի փոխարինում	500	500	500	500
227	Հետևի կայունարարի վռանների փոխարինում 1 հատ	3800	4000	4000	4000
228	Հետևի կայունարարի կանգնակի փոխարինում	2800	3000	3000	3000
229	Հետևի կայունարարի կալունակի փոխարինում	3800	4000	4000	4000
230	Հետևի զսպանակների փոխարինում	500	500	500	500
231	Հետևի ծգածողի հանում և տեղադրում կամ փոխարինում	2400	2500	2500	2500
232	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	7200	7500	7500	7500
233	Հետևի ցնցամեղմիչի փոխարինում	7200	7500	7500	7500
234	Հետևի կախոցի սայլենտ-բլոկի սպասարկում	5760	6000	6000	6000
235	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	9600	10000	10000	10000
	7. Ղեկային մեխանիզմ				
236	Ղեկայունակի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	33000	35000	75000	40000
237	Ղեկայունակի արորիկի փոխարինում	7200	7500	7500	7500
238	Ղեկայունակի առանցքային սնու փոխարինում	12000	12500	12500	12500
239	Ղեկայունակի խաչուկի փոխարինում	14400	15000	15000	15000
240	Ղեկայունակի վերանորոգման հավաքածույի փոխարինում	12000	12500	12500	12500
241	Ղեկայունակի քանդում, արատավորում, հավաքում	9600	10000	10000	10000
242	Ղեկայունակի կարգավորում	4800	5000	5000	5000
243	Ղեկային մեխանիզմի ազդանշանի փոխարինում	4800	5000	5000	5000
244	Ղեկային մեխանիզմի ժապավենի փոխարինում	7200	7500	7500	7500
245	Ղեկային մեխանիզմի փոխակերպիչների հավաքածույի փոխարինում	2400	2500	2500	2500
246	Ղեկային մեխանիզմի փոխակերպիչների հավաքածույի նորոգում	2400	2500	2500	2500
247	Ղեկայունակի պատյանի փոխարինում	2400	2500	2500	2500
248	Ղեկային մեխանիզմի փականքի փոխարինում	4800	5000	5000	5000
249	Ղեկային մեխանիզմի փականքի և հակաառնանգման մեխանիզմի փոխարինում	4800	5000	5000	5000
250	Ղեկային մեխանիզմի ղեկայունակի ամրացման անուրի փոխարինում	2400	2500	2500	2500
251	Ղեկային ձողի առանցքակալի փոխարինում	9600	10000	10000	10000
252	Ղեկային կալունի ծգանների փոխարինում	7200	7500	7500	7500
253	Ղեկային կալունի միջին ծգանի փոխարինում	4800	5000	5000	5000

254	ՂԿ-ի առանցքակալի կամ վրանների փոխարինում	2400	2500	2500	2500
255	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	9600	10000	10000	10000
256	Ղեկի էլեկտրական կարգավորիչի փոխարինում	14400	15000	15000	15000
257	Ղեկային ճոճանակի նորոգման լրակազմի փոխարինում	2400	2500	2500	2500
258	ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում կամ փոխարինում	7200	7500	7500	7500
259	Հիդրոուժեղարարի մղիչի փոխարինում	14400	15000	15000	15000
260	Հիդրոուժեղարարի մղիչի հիմնական նորոգում, ներառյալ աշխատանքները	19200	20000	20000	20000
261	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	4800	5000	5000	5000
262	Հիդրոուժեղարարի բարձր ճնշման խողովակի փոխարինում	7200	7500	7500	7500
263	Հիդրոուժեղարարի ցածր ճնշման խողովակի փոխարինում	7200	7500	7500	7500
264	Հիդրոուժեղարարի վերանորոգման հավաքածույի փոխարինում	12000	12500	12500	12500
265	Ղեկային ձգածողի հանում և տեղադրում կամ փոխարինում	2400	2500	2500	2500
266	Ղեկային ձողի գնդե հողակապի նորոգում	7200	7500	7500	7500
267	Ղեկային ձգածողի ձգանների հանում և տեղադրում կամ փոխարինում	7200	7500	7500	7500
268	Ղեկի հանում տեղադրում կամ փոխարինում	4800	5000	5000	5000
269	Ղեկային ձգածողի ծայրակալների փոխարինում	4800	5000	5000	5000
270	Հիդրոուժեղարարի համակարգի յուղի փոխարինում	2400	2500	2500	2500
	8. Արգելակային համակարգ				
271	Վակուումային ուժեղարարի փոխարինում	19200	20000	20000	20000
272	Վակուումային ուժեղարարի փականի փոխարինում	2400	2500	2500	2500
273	Գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	14400	15000	15000	15000
274	Գլխ. գլանի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	19000	20000	20000	20000
275	Աշխատանքային գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	14400	15000	15000	15000
276	Աշխատանքային գլանի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	9600	10000	10000	10000
277	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում	7200	7500	7500	7500
278	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում	7000	7500	7500	7500
279	Առջևի սուպպորտի վերանորոգում	6500	7000	7000	7000
280	Հետևի սուպպորտի վերանորոգում	6500	7000	7000	7000
281	Արգելակի վթարային արգելախանման լծակի փոխարինում	4800	5000	5000	5000
282	Արգելակի վթարային արգելախանման լծակի նորոգում	4800	5000	5000	5000
283	Արգելակային փողրակի փոխարինում	2400	2500	2500	2500
284	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	3800	4000	4000	4000
285	Արգելակային համակարգի օդահանում	1900	2000	2000	2000
286	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	4000	4000	4000	4000

287	Հետևի թմբուկային կոճղակների փոխարինում	4000	4000	4000	4000
288	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	4000	4000	4000	4000
289	Առջևի արգելակային սկավառակների հղկում 1 հատ	6720	7000	7000	7000
290	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում 1հատ	6720	7000	7000	7000
291	Հետևի արգելակային սկավառակի հղկում 1հատ	6720	7000	7000	7000
292	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում կամ փոխարինում	2400	2500	2500	2500
293	ABS-ի հանում և տեղադրում կամ փոխարինում	14400	15000	15000	15000
294	ABS-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	14400	15000	15000	15000
295	ABS-ի տվիչի փոխարինում	7200	7500	7500	7500
296	ABS-ի էլեկտրական հաղորդալարերի փոխարինում	4800	5000	5000	5000
297	Ձեռքի արգելակի հանում և տեղադրում կամ փոխարինում	4800	5000	5000	5000
298	Ձեռքի արգելակային մեխանիզմի վերանորոգում	4800	5000	5000	5000
299	Ձեռքի արգելակի կոճղակների փոխարինում	4800	5000	5000	5000
300	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	4800	5000	5000	5000
301	Ձեռքի արգելակի ճոպանի վերանորոգում	4800	5000	5000	5000
302	Հետևի արգելակների կարգավորում	2400	2500	2500	2500
303	Արգելակային համակարգի լվացում	9600	10000	10000	10000
304	Արգելակային հեղուկի փոխարինում	2000	2000	2000	2000
9. Էլեկտրասարքավորում					
305	Գններատորի հանում, տեղադրում կամ փոխարինում	9600	10000	10000	10000
306	Գններատորի քանդում և արատավորում, հավաքում	7200	7500	7500	7500
307	Գններատորի ստատորի փոխարինում	4800	5000	5000	5000
308	Գններատորի ռոտորի փոխարինում	4800	5000	5000	5000
309	Գններատորի լիցքավորման ռելեի փոխարինում	4800	5000	5000	5000
310	Գններատորի դիողային կամրջակի փոխարինում	4800	5000	5000	5000
